

րակուած Համաքարքառ հիկն եւ նոր կահարանաց զիրքի տպագրութեան ծախուց մէկ մասը հայթայթելով նոյն զիրքին բոլոր օրինակները նուիրած է նոյն վանքին, այդ պատճառաւ 1892ին արժանացած է Խրիմեան Հայրիկի Երուսաղէմէն իրեն ուղղած չքնաղ գնահատականին՝ որ հրատարակուած է նոյն զիրքին սկիզբը: Խաչիկեան քհ. Զուղայի մէջ բացած է դպրոցներ և Կալկաթայի մէջ հիմնած է սեպհական տպարան մը, ուր հրատարակած է Չամչեանի Վահան հարսոյ զիրքը, որուն ընդօրինակութիւնը տուած է 1844ին Ս. Յակոբի միաբաններէն Հոգկաց Նւ. Տէր Գրիգորեան Իսահակ վրդ.: Մշակ թերթը կը գրէ (1894, Թ. 19) թէ Յովհաննէս քհ. անգուակ մեռնելով՝ թողած է 30,000 ոսկւոյ հարստութիւն մը, զոր կտակած է Ս. Էջմիածնի և Ս. Երուսաղէմի վանքերուն և այլ հաստատութիւններուն: Այդ կտակի մասին սակայն, Ս. Յակոբի վանքը ուէ տեղեկութիւն չունի: Խաչիկեան քհ. վախճանած է 1897ին և թողած է մի քանի երկասիրութիւններ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔՀ. ԿՐՄԱՆԵՑԻ (ՏՓԽԻՍ). — 1436 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. ձեռագիր Գանձարանի մը մէջ ունի հետեւեալ յիշատակարանը. ՊԶԵ (=1436) թուականով. «... ապա գնացաք ի տեղիքն երախտաց Երուսաղիմ եւ համբորեցիկն գաւորք գերեզմանն հետ գնալն ի Դըմըշխայ զգրոցս թուղթն և այլ գրանաց առաք եկաք, բերաք ի Վրաց տուն. թողաք զթուղթս և գնացաք ի Գանձակ:» Յիշեալը Չաղաթ բունաւորէն կը կողոպտուի եւ յետոյ վերագանալով՝ թողած թուղթը կ'առնու և կը կատարէ իր ընդօրինակութիւնները այն ընտիր օրինակէն զոր շնորհած էր Տփխիսի Աւագերէց Սարգիս աբեղան: Նոյն յիշատակարանին մէջ կը յիշէ նաև իր ազգականները. «ըստացայ զսա յիշատակ ինձ և ծնողաց իմոց եղբաւրն Յովհաննէսի և իմ քոյուերն Քողքեանցն. իմ հաւրն Հռոմովի և իմ մօրն Գուհարի, և իմ քուերացն Նիսարսի, Ղուսալի և Հերիքի և իմ գաւակացն Մեղիսեղի և Մխիթարի. . . այլ և զիմ սանամայրն զԱրուս խաթունն և զիւր որդիքն Վաչանն. և զՍողոմոն և զիւր գստերսն . . և զԱննայ խաթունն, և զիւր հարսն զՀոյիսիսիկն» (Թօփ. Յուց. էջ 27. Թ. 21):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔՀ. ՂԱԼԷՄՔԵԱՐ, ՀԱԼԷՊՅԻ. — 1677ին կ'այ-